ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

I.2024թ. բյուջեի կատարողականի մասին

«ՀՀ 2024թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետի աշխատակազմին 2024թ.-ի համար նախատեսվել են ծախսեր 4,990,218.20 հազար ՀՀ դրամ գումար: Փաստացի ծախսը կազմել է 4,961,490.55 ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել 99.42%-ով, որից

Ըստ ծրագրերի և միջոցառումների նախատեսվել և ֆինանսավորվել է

1 . Ծրագիր 1051

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում միջոցառում.

2024թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 459,889.4 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 452,850.07 հազար ՀՀ դրամ:
Ֆինանսավորումը կատարվել է 98.47%-ով:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում միջոցառում

2024թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 3,290 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 2,832.74 հազար ՀՀ դրամ: Տնտեսումը պայմանավորված է գնման ընթացակարգի արդյունքում առաջարկված և նախատեսված գների տարբերությամբ: Ձեռք է բերվել գրասենյակային ապրանք թվով 47 հատ:
Ֆինանսավորումը կատարվել է 86.1%-ով:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ

Ծրագիր 1212:

Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին.

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 62,156.0 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել 62,155.28 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով:

2024թ.-ի ընթացքում, միջոցառման շրջանակներում Արենի և Վայք խոշորացված համայնքների 6 բնակավայրերում էլեկտրաէներգիայի գումարների մասնակի փոխհատացումից օգտվել է 1,196 շահառու, անշարժ գույքի հարկ՝ 1,260 շահառու, ոռոգման ջուր՝ 471 շահառու:

Մարզերին սուբվենցիաների տրամադրում ենթակառուցվածքների զարգացման նպատակով.

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 693,440.2 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել 689,732.59 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 99.47 %-ով:

Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծում միջոցառում:

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 65,724.0 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել 65,724.0 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով /Խաչիկ սահմանամերձ բնակավայրի 76 շահառուների վարկային պարտավորությունների մասնակի փոխհատուցում/:

Հրետանակոծության հետևանքով հասցված վնասների փոխհատուցում միջոցառում:

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 10,000.0 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել 10,000.0 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով /Ջերմուկ քաղաքի 1 բնակչին հասցված վնասի փոխհատուցում/:

Ծրագիր 1049

Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ միջոցառում.

Նախատեսվել է 231,116.6 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 222,935.6 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 96.46%-ով, որը պայմանավորված է պայմանավորված է գնման ընթացակարգի արդյունքում առաջարկված և նախատեսված գների տարբերությամբ: Ամառային պահպանության է ենթակվել 109.5կմ ավտոճանապարհ, ձմեռային պահպանության է ենթակվել՝ 174.7 կմ ճանապարհ:

Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում

Նախատեսվել է 2,420.0 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 2,400.0 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 99.17%-ով, որը պայմանավորված է գնման ընթացակարգի արդյունքում առաջարկված և նախատեսված գների տարբերությամբ:

Այլ նշանակության ճանապարհների հիմնանորոգում

Նախատեսվել է 3,300.0 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 3,280.0 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 99.39%-ով, որը պայմանավորված է գնման ընթացակարգի արդյունքում առաջարկված և նախատեսված գների տարբերությամբ: Ֆինանսավորման արդյունքում իրականացվել է ,,Ալպյան մարգագետիններ,, տանող 5կմ գրունտային ճանապարհի նախագծման և փորձաքննության փաստաթղթերի մշակման աշխատանքներ:

3. ՀՀ ԿԳՍՄ նախարարության պատվիրատվությամբ

Մշակույթի ոլորտ

Ըստ մշակույթի ոլորտի ծրագրերի 2024թ.-ի պետական բյուջեով ՀՀ Վայոց ձորի մարզի մշակույթի ոլորտի համար նախատեսվել է 20,989.8 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորվել է 20,989.8 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորվել է 100%-ով:

այդ թվում՝

Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ միջոցառում.

Ծրագիր <u>1075</u>

Նախատեսվել է 17,823.4 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 17,823.4 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Ֆինանսավորված ԱԱՀ 2,971.0 հազար ՀՀ դրամ գումարը վերադարձվել է պետական բյուջե:

Համայնքի մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում.

Ծրագիր <u>1196</u>

Նախատեսվել է 3,166.4 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 3,166.4 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Ֆինանսավորված ԱԱՀ 527.8 հազար ՀՀ դրամ գումարը վերադարձվել է պետական բյուջե:

-Կրթություն

Ըստ կրթության ոլորտի ծրագրերի միջոցառումների իրականացման համար 2024թ.-ի պետական բյուջեով ՀՀ Վայոց ձորի մարզի կրթության ոլորտի համար նախատեսվել է **3,348,780.2** հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 3,345,243.5 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 99.89%-ով:

-Հանրակրթական ուսուցման ծրագրեր 1146

1.Տարրական ընդհանուր կրթություն.

Միջոցառում 11001

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 1,018,168.0 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 1,018,168.0 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

2.Հիմնական ընդհանուր կրթություն.

Միջոցառում 11002

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 1,280,278.3 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 1,280,278.3 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

3.Միջնակարգ ընդհանուր կրթություն.

Միջոցառում 11003

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 494,364.3 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 494,364.3 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

***4.* ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի) դասավանդող ուսուցիչների համար վարձատրության բարձրացված հստակ չափաքանակի սահմանում:**

Միջոցառում 12015

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 44,219.6 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 44,219.6 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով, միջոցառման շահառուներ՝ ԲՏՃՄ առարկա դասավանդող 274 ուսուցիչներ:

5. ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում

Միջոցառում 12016

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 112,916.3 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է

112,634.9 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 99.75%-ով: Շահառու են հանդիսացել ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող 26 պետական հանրակրթական հաստատություններում մինչև 1 դրույք դասավանդող 283 ուսուցիչներ:

6. Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների փոխհատուցում

Միջոցառում 12002

2024թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 28,849.3 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 27,272.63 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 94.53 %-ով: Միջոցառման շահառու են հանդիսացել 265 մանկավարժ և 207 աշակերտ:

7. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարներ.
Միջոցառում 12004

2024թ. պետական բյուջեով նախատեսվել է 5,780.6 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 5,780.5 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Շահառու են հանդիսացել 25 մանկավարժներ:

8. 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիր
Միջոցառում 12020

2024թ. պետական բյուջեով նախատեսվել է 10,472.6 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 10,472.3 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Շահառու են հանդիսացել 13 մանկավարժներ:

9. Արտադպրոցական դաստիարակություն

Միջոցառում 11001

2024թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 52,462.3 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 52,462.3 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%:

10. Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում երաժշտական և արվեստի դպրոցներում.

Միջոցառում 11005

2024թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 8,497.5 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 8,497.5 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով: Շահառու են հանդիսացել երաժշտական և արվեստի դպրոց հաճախող թվով 39 երեխա:

11. Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը

Միջոցառում 11010

2024թ. պետական բյուջեով նախատեսվել է 107,158.6 հազար ՀՀ դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 107,158.6 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Ծրագրի շահառու են հադիսացել մարզի կամավոր ատեստավորված 154 ուսուցիչ:

12. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի և մանկավարժի վերապատրաստում

Միջոցառում 11022

2024թ. պետական բյուջեով նախատեսվել է 1,215.1 հազար ՀՀ դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 1,221.96 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 99.74%-ով: Ծրագրի շահառու են հադիսացել ուսումնական հաստատությունների 126 ուսուցիչ :

13.Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում՝

Միջոցառում 11005

2024թ. պետական բյուջեով նախատեսվել է 1,200.0 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 1,200.0 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով: Ծրագրի շահառու են հադիսացել մարզի ուսումնական հաստատությունների 140 երեխաներ :

14. Կամավոր ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների որակի բարձրացմանը

Միջոցառում 12002

2024թ. պետական բյուջեով նախատեսվել է 846.3 հազար ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 846.3 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

Նախադպրոցական կրթություն -1238

15.Նախադպրոցական կրթության հասանելիության և որակի ապահովում

Միջոցառում -11001

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 24,583.2 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 24,583.2 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

16. Նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստում

Միջոցառում -11002

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 1,374.5 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորում չի իրականացվել շահառուների բացակայության պատճառով:

17. Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում

Միջոցառում -12001

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 156,083.6 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 156,083.01 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Միջոցառման շրջանակում շահառու են հանդիսացել մարզի համայնքների նախադպրոցական հաստատությունների կրթության առանձնահատուկ կարիք ունեցող 45 և զինծառայող ծնողի 312 երեխաներ:

18. Մասնագիտական զարգացման – վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժների տարակարգի շնորհման գործընթաց

Միջոցառում -12002

2024թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 300.0 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորում չի իրականացվել՝ շահառուների բացակայությամբ պայմանավորված:

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության պատվիրատվությամբ

-Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում

Ծրագիր 1015.

Միջոցառում 12001

2024թ. պետական բյուջեով նախատեսվել է 89,112.0 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 83,341.72 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 93.52%-ով, թերի ֆինանսավորումը պայմանավորված է աշխատանքից ազատված շահառուների, թափուր հաստիքների առկայության, սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման այլ պատճառներով: Ծրագրից օգտվել են 1157 շահառուներ:

II. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

2024 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջներով ընդամենը տարեկան եկամուտներ են նախատեսվել 4 մլրդ 168 մլն 533 հազար 9 հարյուր ՀՀ դրամ, տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից 2024 թվականի ընթացքում հավաքագրվել է 4 մլրդ 344մլն 912 հազար 4 հարյուր ՀՀ դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 104.2%-ով: 2024 թվականի համար ընդամենը եկամուտների ավել պլանավորումը 2023 թվականի համեմատ կազմել է 23.6 տոկոս, սակայն ավել հավաքագրվել է 31.6 տոկոս կամ ավել է հավաքագրվել 1 մլրդ 44 մլն 348 հազար 9 հարյուր ՀՀ դրամ, որից 2024 թվականի համար սեփական եկամուտներ նախատեսվել են 1 մլրդ 324 մլն 912 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, /նույնպես ավել է պլանավորվել 2023 թվականի համեմատ/, փաստացի հավաքագրվել է 1 մլրդ 499 մլն 101 հազար 1 հարյուր ՀՀ դրամ կամ կատարվել է 113.1%-ով, աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմում է 11.6% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 155 մլն 688 հազար 7 հարյուր ՀՀ դրամ :

Ամփոփելով գանձապետական համակարգի տվյալները, 2024 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջներով նախատեսվել է.

- **Գույքային հարկեր անշարժ գույքից՝** 2024 թվականի համար պլանավորվել է հավաքագրել 174 մլն 318 հազար 1 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 190 մլն

667 հազար 3 հարյուր ՀՀ դրամ կամ կատարվել է 109.4%-ով, նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 22.3% կամ ավել հավաքագրվել է 34մլն 743 հազար 1 հարյուր ՀՀ դրամ:

- **Գույքահարկ փոխադրամիջոցներից**՝ տարեկան պլանավորվել է հավաքագրել 346 մլն 922 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 368 մլն 716 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 106.3%-ով, նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 2.5% կամ ավել հավաքագրվել է 8 մլն 859 հազար 9 հարյուր ՀՀ դրամ:
- **Տեղական տուրքեր**՝ պլանավորվել է հավաքագրել 40 մլն 151 հազար 9 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 49 մլն 804 հազար 3 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 124.0%-ով, նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 51.6 տոկոս կամ ավել է հավաքագրվել 16 մլն 957 հազար 2 հարյուր ՀՀ դրամ:
- **Գույքի /հողի/ վարձակալություն**՝ 404 մլն 495 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 422 մլն 234 հազար 4 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 104.4%-ով
- **Տեղական վճարներ**՝ նախատեսվել է 201 մլն 135 հազար 5 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել 236 մլն 432 հազար 5 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 117.5%-ով: Աճը նախրոդ տարվա համեմատ կազմում է 17.7% կամ ավել հավաքագրվել է 35 մլն 515 հազար 4 հարյուր ՀՀ դրամ: Այդ թվում՝
- **Աղբահանության վճար**՝ նախատեսվել է 80 մլն 854 հազար ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 73 մլն 339 հազար 5 հարյուր ՀՀ դրամ կամ կատարվել է 90.7%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 7% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 4 մլն 779 հազար ՀՀ դրամ:

Համահարթեցման կարգով ՀՀ 2024թ-ի համար պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 2 մլրդ 76 մլն 844 հազար 9 հարյուր ՀՀ դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Փորձագետ ֆինանսական վարչության պետի պաշտոնում՝ Գ.Դավթյան